ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- սեպտեմբերի 2021 թվականի №---------Ա
ք. Երևան

«ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶՋԷԿ)» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ա) «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի հունիսի 29-ի №88 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ Ընկերության ու «Տեֆֆի» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 23-ին (2017 թվականի սեպտեմբերի 14-ին կատարված փոփոխություններով) կնքվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Գործարանային փողոցի №1 հասցեում գտնվող անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, որի շրջանակում «Սոլանում» փակ բաժնետիրական ընկերությունն ունի մտադրություն «Տեֆֆի» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել ենթավարձակալության պայմանագիր՝ վերջինիս կողմից տիրապետվող հիշյալ հասցեում գտնվող տարածքից 55 քմ մակերեսով օժանդակ միացյալ մասնաշենքի տարածքի նկատմամբ (այսուհետ՝ նաև Գործարք): Նույն հասցեում գտնվող գույքի մասով առկա է հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի №356Ա որոշումը, որի շրջանակում կնքված ենթավարձակալության պայմանագիրը լուծվել է: Վերոգրյալից ելնելով՝ Ընկերությունը խնդրել է համաձայնություն տալ Գործարքին,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2021 թվականի հուլիսի 13-ի №ԳԲ/34.1-Մ2-2/2351-2021 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ ստանալու Գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումը,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 31-ի №02/12.8/29607-2021 գրությամբ Հանձնաժողով են ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ու էկոնոմիկայի նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի դիրքորոշումները՝ Գործարքի մասով առարկություններ չունենալու վերաբերյալ,

դ) Հանձնաժողովի կողմից գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանն ու պետական շահերին, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Գործարանային փողոցի №1 հասցեում գտնվող տարածքից 55 քմ մակերեսով օժանդակ միացյալ տարածքը «Տեֆֆի» փակ բաժնետիրական ընկերության կողմից «Սոլանում» փակ բաժնետիրական ընկերությանը ենթավարձակալությամբ հանձնելու գործարքին:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:

3. Ընկերությանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- սեպտեմբերի 2021թ.